գլիերէն և պարսկերէն լեզուներ և զանազան գիտութիւններ։ Անգլիերէնի գլխաւոր վարժապետը մի հայ է, որ մանկութիւնից ուսում է առած Անգլիայում, և շատ տարիներ Հնդկաստանի Բոմբայ քաղաքում ուսուցչի պաշտօն է կատարած։ Աշակերտները հայեր և պարսիկներ են, բայց հայերի թիւը մեծամասնութիւն է կազմում։

Օրիորդաց դպրոցը ունի 50-ից աւելի աշակերտուհիներ. սովորում են հայերէն և անգլիերէն լեզուներ, ծանօթանում են տարբերական գիտութեան հետ, պարապում են կարով և ասղնագործութեամբ։ Այդ դպրոցում աշխատում են երկու վարժապետ, երեք վարժուհի և մի կին ևս, որ կար է սովորեցնում։

Սպահանում բացի միսիոներ Բրուսից կայ մի երկրորդ քարոզիչ ևս զօկտոր Հըրնվի, որ առաջինի օգնականն է։ Նա բժիշկ է, բայց մի և նոյն ժամանակ քարոզութիւններ է անում և տղաների դպրոցում ամեն օր երկու ժամ դասեր ունի։

Բողոքականները Սպահանում ունեն մի մեծ ժողովարան, որի մէջ կիրակի առաւօտեան պարսկերէն քարոզ է լինում, ճաշից յետոյ անգլիերէն, իսկ երեկոյեան հայերէն աղօթք է կարդացվում։ Բացի դրանից կայ կիրակնօրեայ դպրոց ժողովուրդը սուրբ գրքի հետ ծանօթացնելու համար, այլ և շաբաթ ու չորեքշաբթի երեկոները աղօթքի ժողովներ են լինում հայերէն լեզուով։ Հաղորդութիւն առնողների թիւը մօտ 55 հոգի է, բայց բողոքական կոչվողների թիւը մօտ 200 հոգի։ Դրանք մեծ մասամբ հայեր են, պարսիկներից յաջողվել է Մ. Բրուսին մինչև այսօր միայն 16 հոգի։

Պարսկաստանում մեծ քանակութեամբ տարածվում են սուրբ գրքերը կամ էժան գնով վաճառվելով, կամ ձրի բաշխվելով։ Սուրբ գրքերի ընթերցանութեամբ հետաքրքրվում են մինչև անգամ մահմեդական հոգևորականները։ Գրքերը մատակարարում է Բրիտանական Աստուծաշունչի ընկերութիւնը։ Մ. Բրուսը պատրաստել է նոր կտակարանի մի նոր թարգմանութիւն պարսկերէն լեզուով, չը նայելով, որ շատ տարի առաջ նոր կտակարանի պարսկերէն թարգմանութիւնը կար արդէն։

Բողոքականութիւնը աւելի մեծ յառաջադիմութիւն է արել Պարսկաստանի Համադան քաղաքում։ Այստեղի բոլոր հայ բնակիչները վերջին մի քանի տարվայ ընթացքում ամբողջապէս ընդունեցին բողոքականութիւն։ Լուսաւորչականների հին եկեղեցին այժմ դարձել է բողոքականների ժողովարան. այստեղ հայերէն, տաճկերէն և պարսկերէն լեզուներով աղօթքներ և քարոզներ են կատարվում։ Համադան քաղաքի մօտ կայ մի հայոց գիւղ, որի բնակիչները նոյնպէս հրաւիրում են Ամերիկացի քարոզիչներին իրանց մօտ։ Զաչայ Շիմոնը, ազգով ասորի քահանան արդէն այնտեղ քարոզութիւն է ընկսել։

Բողոքականութիւնը Համադանում տարածվում է և հրէայ բնակիչների մէջ, որոնց թիւը 3000 հոգի է։ Դրանց գրեթէ 4-ից մէկ մասը քրիստոնէութիւն ընդունած է։ Մնացեալներն ևս օրօրվող դրութեան մէջ են, ստիպում են իրանց հոգևորականներին վիճել քրիստոնեայ հրէաների հետ, եթէ յաղթվեն, իրանց թոյլ տան ընդունել քրիստոնէութիւն։ Հրէաները մինչև այժմ յաճախում էին հայոց ժողովարանում, բայց շատով միսիոներները նրանց համար կը բաց անեն առանձին դպրոց և ժողովարան։

Պարսկաստանից դուրս գալով, Բաղդադ քաղաքով անցնելով, չեմ կարող մի քանի խօսք չասել այդ քաղաքի աւետարանական գործի մասին։ Այստեղի հայ կաթոլիկներից և հայ լուսաւորչականներից նոյնպէս կազմվել է մի փոքրիկ բողոքական եկեղեցի, ունեն իրանց առանձին ժողովարանը, ուր քարոզութիւններ են լինում հայերէն, արաբերէն և տաճկերէն լեզուներով։ Միսիոներները նպատակ ունեն շուտով բաց անել և մի դպրոց Բաղդադում, այդ մասին արդէն բանակցութիւններ սկսվել են Լօնդոնի հետ։

Եթէ Պարսկաստանի հայերի այժմեան անհոգ, անխնամ դրութիւնը շարունակվի, տարակոյս չը կայ որ մի քանի տարուց յետոյ այնտեղ ոչ մի հայ լուսաւորչական չի մնայ։ Բողոքական քարոզիչների կողմից նկատվում է եռանդուն, անձնանուէր աշխատութիւն, իսկ հայոց ազգա հոգևորականների կողմից ծուլութիւն, գայթակղութիւն և անհոգութիւն միայն դէպի իրանց հօտի հոգևոր կրթութիւնը։ Եթէ այդ միսիոներները չը լինէին, մի և նոյն է, անդայթ հայերը մահմեդականութիւն կընդունէին, ինչպէս մշտ լինում էր. դեռ էլ այժմ դարձեալ քրիստոնեայ են դառնում։

Իբրև փաստ, թէ որքան հայ հոգևորականները հէնց իրանք նպաստում են իրանց ժողովրդի կրօնափոխ լինելուն, կը յիշեմ այն, որ ահա հինգ-վեց տարի է Սպահանի և Հնդկաստանի հայերը անդադար բողոքում են իրանց վիճակաւոր առաջնորդի անկարգութիւնների դէմ, խնդրում են Էջմիածնից, որ նրան փոխէ։ Բայց Էջմիածինը նրանց մինչև անգամ պատասխանի էլ չէ արժանացնում, որովհետև այստեղ մի Փանկունի կայ, որ յիշեալ անկարգ առաջնորդի պաշտպանն է, որովհետև յիշեալ անկարգ առաջնորդը ատատ փողեր է ուղարկում Անկանոնն....

Էլ ինչու ենք մեղադրում, որ Անգլիայից և Ամերիկայից միսիոնարները գալիս են և որսում են մեր ժողովուրդը։ Մի և նոյն չէ. անհավատ հօտի ոչխարին եթէ գայլը չուտէ, մի այլ գազան իսօ կուտէ։ Պարսկաստանի անտէր հայը եթէ բողոքական չը դառնայ, մահմեդականութիւնը նրա համար պատրաստ է. ինչպէս էլ որ կորան այդ երկրի բազմաթիւ հայերը։

Այսքանը ևս գրեցի արևելեան Պարսկաստանի հայ բողոքականների մասին, գուցէ մի ուրիշ նամակով կը գրեմ Թէհրանի և առհասարակ Ատրպատականի հայ բողոքականների մասին։

***

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՍՕՖԻԱ, 19 յունիսի։ Յունիսի 14-ին եղած քուէարկութենից յետոյ երբ ձայների հաշիւն եղաւ, յայտնվեցաւ, որ մեծամասնութիւնը իշխանի կողմն է։

ԼՕՆԴՕՆ, 18 յունիսի։ Ֆրանսիայի համաձայնութեամբ մշակվում է մի առաջարկութիւն Տրիպոլիի վրա գերիշխանութիւնը Խալիֆային յանձնելու մասին։

ՓԱՐԻԶ, 18 յունիսի։ Բարտելեմի Սենտ-Իլեր գրեց Բ. Դրանը մի շրջաբերականով, որով նա զանգատվում է թիւրքաց հատատարմատար Հաֆիզ-փաշայի գործողութեան դէմ Տրիպոլիի մէջ։

ԲԵՐԼԻՆ, 18 յունիսի։ Լայպցիգից հեռագրում են, որ Լայպցիգի նահանգից արտաքսված են մօտ 100 սոցիալիստներ, որոնց թւումն են Բեբել, Լիբկնեխտ, Հասենկլեվեր և ֆինկ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 յունիսի։ Պետական բանկի 5% առմանակը առաջին շրջանի արժէ 95 ր. 75 կ., երկրորդ 94 ր. 50 կ., երրորդ 94 ր. 50 կ., չորրորդ 94 ր. 25 կ., ներքին 5% առաջին փոխառութեան առմանակը արժէ 228 ր. 50 կ., երկրորդ 221 ր., արևելեան առաջին փոխառութեան առմանակը արժէ 92 ր. 87 կ., երկրորդ 92 ր. 87 կ., երրորդ 93 ր., ոսկի 8 ր. 3 կ.։ Ռուսաց 1 բուբլ Լօնդոնի վրա արժէ 24,75 պէնս, Ամստերդամի վրա 124,75 պէնս, սուսաց 100 ր. Համբուրգի վրա 211 մարկ 75 պֆ., Փարիզի վրա արժէ 260 ֆրանկ 75 սանտիմ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 յունիսի։ Ներքին գործերի մինիստր ժողովեց արդիլել „Одес. Листокъ Объявл.“ լրագրի հրատարակութիւնը չորս ամսով։

ՊՐԱԳԱ, 20 յունիսի։ Չէխական բոլոր լրագիրները կալանաւորված են, գերմանացի ուսանողների դէմ չէխերին գրգռելու պատճառով։ Յունիսի 19-ին համալսարանը փակվեցաւ։ Կուրսերը չէխական և գերմանական երիտասարդութեան մէջ շարունակվում են։ Ուսանողներից շատերը կալանաւորված են։

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 20 յունիսի։ Այսօր, առաւօտեան 9 ժամին հրացանից արձակեցին Հարֆիլդ նախագահի վրա։ Կարծում են որ նա ծանր կերպով վիրաւորված է, լուր կայ, մինչև անգամ, որ արդէն մեռած է։ Ընդհանուր սասսիկ շփոթի պատճառով անհնարին է ստանալ ճիշդ տեղեկութիւններ։ Սպանողը կալանաւորված է։

Կ. ՊՕԼԻՍ, 19 յունիսի։ Ամուսնական կապերը սուլթանի փեսաների, որոնք մահվան են դատապարտված, խզված են յայտնված։

ԱԹԷՆՔ, 19 յունիսի։ Եւրոպական յանձնաժողով հասել է Պէրվէզի։ Կէսերի պատերազմը սկսված է։ Արտայի գրաւելը կը սկսվի երեքշաբթի օր։

ԿՐՕՆՇՏԱԴ, 20 յունիսի։ Անգլիական նաւատորմը, Էդինբուրգեան իշխանի առաջնորդութեամբ, ժամը երեքին հասաւ Կոբանայա Գօրկա ասված տեղին, Կրոնշտադից եօթ վերստ հեռու։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

մէջ, ուստի և աւելի պաշտպանված է, աւելի օգտակար, քան թէ նրա կ. պօլսեցի եղբայրը, վանորայ արդարութիւն չէր լինի բանենք բոլոր բարոյական պարտքը պօլսեցւոց վրա, և ազատ թողնել ռուսահանցուն։

Երկրորդ դասակարգը վերցնենք մեր հասարակութեան այն մասը, որը միմիայն առուտուրով և ֆինանսական գործերով է պարապում։ Սրա մասին պատուական «Մշակը» հետևեալ դատողութիւնը կանէ. «սրանց նիւթական շահը մինչև անգամ պահանջում է ծաղկեցնել Հայաստանի առուտուրը, արդիւնագործութիւնը, խաչնարածութիւնը. երկրագործութիւնը։ Սրանք կամ անձամբ, կամ իրանց ագենտների միջոցով կարող են հիմնել Հայաստանում գործարաններ, արհեստանոցներ, գնել հողեր, արդիւնաբերել բամբակ, ծխախոտ, վաճառականել բուրդ, մրգեր և այլ հազար ու մի բերքեր...։ Գեղեցիկ և իրաւացի մտքեր և շատ ափսոսալի կը լինէր, եթէ այս մտքերը անկատար մնային։ Գեղեցիկ, եթէ այդ մտքերը արձագանք գտնէին Կ. Պօլսի հայազգի ունեւոր վաճառականների սրտերում, իսկ եթէ չը գտնվի այդ արձագանքը, մթթէ նրանք, այդ մտքերը, պէտք է մնան «ձայն բարբառոյ յանապատի»։ Ոչ, պատասխանում եմ ես. դարձնենք մեր ուշքը մեզ վրա, մեր ունեւոր վաճառականների վրա և տեսնենք՝ կարող են նրանք, միջոց ունեն արդեօք նրանք այդ գաղափարները իրագործելու յօգուտ իրանց և ի բարեբաստութիւն թշուառ Հայաստանի։ Այո, ունեն. մեր վաճառականները ոչ թիւով քիչ են և ոչ կարողութեամբ նուազ Կ. Պօլսի հայ վաճառականներին, և որ գլխաւորն է, տրանց գործունէութեան ասպարէզը աւելի լայն է և ազատ, քան թէ նրանց և ահա ինչպէս. առաջին՝ Հայաստանը մեր երկրին (Անդրկովկասին) աւելի մօտ է, յարաբերութիւն ունենալու միջոցները աւելի հեշտ են ճանապարհների լաւութեան պատճառաւ (համեմատաբար Կարսէն մինչև Թիֆլիս գնացիկ չօսաէ է. Թիֆլիսէն էլ մինչև Սև ծովը երկաթուղի, իսկ Բայազէտ, Մուշ, Վան և Արզրում, Հայաստանի այդ գլխաւոր կենտրոնները. Կարսէն այնքան հեռու չեն, որքան Տրապիզոնն կամ Զմիւռնայէն, այն միակ դռներէն, ուր անչուշտ մուտք պէտք է գործեն Հայաստանի բերքերը եւրոպական վաճառականութեան շրջանը մտնելու համար։

Երրորդ՝ մեզանում վաճառականութեամբ (ի հարկէ մեծ) պարապողների թիւը շատ և կարողութիւնն աւելի մեծ է, քան թէ Կ. Պօլսի հայոց. Պարսկաստանի և ամբողջ Կովկասի բերքերն ու հում ապրանքները մեր հայ վաճառականների ձեռքով կուղարկվին Մարսէյլ, Փարիզ, Լօնդրա, Մանչեսթեր, Լիվրպուլ, ռուսաց քաղաքները մինչև կը թողում։ Ինչ կը լինի որ Հայաստանն ևս Նրանց գործունէութեան շրջանը մտնէ. մթթէ նրա արդիւնաբերած բուրդը, բամբակը, ծխախոտը, կոտեղէնը և այլ հազար տեսակ բերքերը քիչ են, կամ պակաս շահաւէտ. մթթէ մեր հայի վաճառականները (պօղրիսաղչիկները) վատ հաց կամ բրինձ կը ստանան Հայաստանի պարարտ դաշտերէն։ Եթէ ասեն, թէ այդ առարկաները այնքան շատ չեն, որ կարողանային վաճառականութեան նիւթ դառնալ, դա մեզ համոզիչ պատճառ չէ, շատ չեն, որովհետև զբաղող չը կայ, գնող լինի՝ նրանք կը շատանան։

Երրորդ՝ ռուսահպատակ վաճառականը աւելի ապահովված է Յանկաստանի մէջ. այնտեղ կան հիւպատոսներ, որոնց պարտքն է հսկել իրանց տէրութեան հպատակների օգուտը, ինտերեսը. պաշտօնատէրերի շահախնդրութեան, դատաւորների կողմնապահութեան և աւազակների յափշտակութեան դէմ նրանք պաշտպան ունեն։ Այս բոլորը չը կայ Կ. Պօլսի հայի համար, այդ պատճառաւ նա կը վախենայ և Հայաստանի հետ գործ չի բռնի. իմ կարծիքով, իրաւունք էլ ունի։ Ռուսաբնակ հայի վախը քիչ պէտք է լինի, որովհետև, կրկնում եմ, տէրութիւնը նրա պաշտպանն է. վաճառականութիւնը օտար երկրի մի հետ տէրութեան օգուտն է, դրա համար է, որ մեր տէրութիւնը առատին ծախսեր է անում միշտ զանազան էկսպէդիցիաներ ուղարկելով Ասիայի անմատչելի խորքերը հետազօտելու և վաճառականութեան նոր ազրիւրներ որոնելու. միթէ նա գոհ չի լինի և իր նպատակները կը խնայէ տեսնելով որ իր հպատակները նոր ազրիւրներ են գտած վաճառաշահութեան։ Զը հաշուելով մի առ մի բոլոր շարժառիթները (մոտիվները), կարծեմ, այս երեքն ևս բաւական են, որ ապացուցանեն, թէ մեր ռուսաբնակ հայ վաճառականները եթէ ոչ աւելի, գոնէ ոչ էլ պակաս, կարող են և բարոյապէս պարտաւոր են յարաբերութիւններ ունենալ թիւրքաց Հայաստանի հետ թէ իրանց շահի համար և թէ Հայաստանը բաւորելու, նրա արդիւնաբերութիւնը բարձրացնելու և վաճառականութիւնը ծաղկեցնելու նպատակաւ։ Այս ևս կասեմ, որ սրա համար պէտք չեն ոչ անձնանուիրութիւն, ոչ զոհաբերութիւններ և ոչ իսկ միլիոններով գումարներ, ինչպէս կարող են կարծել ոմանք՝ առանձնաբար իրագործված տեսնելու համար. ոչ, ինչու տեսակետը թողած, իդէալականի ետևից ընկնենք կամ ամպերի մէջ պտտենք, պտտենք այն, ինչ որ մեր կարողութիւնն բարձր չէ, ինչ որ մեր այժմեան համեմատ է, փոքրից սկսելով. ոչ ոք չէ պահանջում, որ մի օրուան մէջ Հայաստանը Եղեմայ դրախտն վերափոխվի, թող միայն կատարվի յարգելի «Մշակ» թերթի ծրագիրը և կատարվի փոքր առ փոքր, քայլ առ քայլ, այսօր մէկը, վաղը միսը և այլն, բայց կատարվի ոչ միայն Կ. Պօլսի հայերէն, այլ և մեր ռուսաբնակ հայերէս, որովհետև վերջինները, կրկնում եմ, թէ աւելի այժմ ենք և մեջոց ունենք զայն կատարելու և թէ մենք ևս թիւրքաց հայի նոյն հարազատ եղբայրներն ենք, ինչ որ Կ. պօլսեցին. մենք խորթ չենք։

Զը կամենալով այլ ևս ձանձրացնել բարեսիրտ ընթերցողին, վերջացնում եմ ասելիքս. մի երկու խօսքի մէջ պարունակելով այն, ինչ որ գրուածիս առարկան է եղած։ Թիւրքաց Հայաստանը դարերով մնալով խաւարի և տգիտութեան մէջ և շրջապատված լինելով գազանաբարոյ և վայրենի ազգերէ, միշտ ենթարկված է եղել և է նրանց հարստահարութեանը, յափշտակութեանն ու կողոպտութեանը և այսօր հասել է այն ծայրահեղ թշուառ դրութեանը թէ մտաւորապէս և թէ նիւթականապէս, որի նրմանը հազիւ գտնվի աշխարհս մի այլ անկիւնում։ Անհրաժեշտ է այդ թշուառութեան առաջն առնուլ, պէտք է օգնութիւն, բայց երազ կը լինի, եթէ այդ օգնութիւնը մենք ապասենք ուրիշներէն. ոչ, եթէ օգնութիւն կայ, դա մեր ձեռքումն է, հայը պէտք է օգնէ հային, բայց օգնողը որ հայը պէտք է լինի, այն, որը բնակվելով մի եւրոպական բարեկրթված ու լուսաւորված հզոր տէրութեան մէջ՝ ինչպէս Ռուսաստան, վաղուց ճաչակած է լուսաւորութեան, բարոյութեան, արդարադատութեան ու ազատութեան քաղցր պտուղները, նրան դիրքն և զգալի է այն քայլախաղաղ լեզին, որը գարերով կը խմէ նրա թշուառ եղբայրը Յանկաստանի ծանր լուծի տակ։ Բաւական է, խղճացէք այդ տառապեալների վրա, գթացէք նրանց տանջանքների վրա, տուէք նրանց ձեռքէն այդ թոյնով լի բաժակը և փոխանակը տուէք նրանց անմահական ջրի բաժակը, որուն նրանք կը պապակին և որը դուք առատութեամբ ունիք. կազմեցէք ինչ որ կամենում եք, ընկերութիւն, հասարակութիւն, ժողով, մասնաժողով, բանը անուան վրա չէ, օգնեցէք միայն թշուառին, մի բաւականանք միայն ուրիշի վրա յոյս դնելով և ուրիշին ճանապարհ ցոյց տալով, ճանապարհ, որի վրայով ինքներդ հեշտութեամբ կերթայիք. հարկաւոր է ձեզ ընկեր, մասնակից, կանչեցէք Կ. Պօլսոյ հայերին, միասին գնացէք, միասին գործեցէք։ Այն որ դժուար է մեկին անել, երկուսով, երեքով հեշտութեամբ կատարվի, և ինչ որ անելք թէ Աստուծոյ հաճելի է և թէ ձեր օրհնութիւնը, վասն զի թէ թշուառին կօգնէք և թէ ձեր շահէն չէք զրկվի. միայն պէտք է սկսել, յետոյ գործը ինքնիրեն առաջ կերթայ, սկսելու համար էլ պէտք է մի փոքր զգացմունք, այն է եղբայրասիրութիւն, մարդասիրութիւն։

Կ. Մէլիք-Բէգլարեան